



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 159-Ա

« 29 » ԱՊՐԻԼԻ 2024Թ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի ԹԻՎ 70-Ա
ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴԻԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածով՝


Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի փետրվարի 20-ի «Դրամաշնորհային ծրագրերով գնումների գործընթացների համակարգման նպատակով հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 70-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X



Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր



Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի
դրամաշնորհային ծրագրերով գնումների գործընթացների համակարգման
նպատակով ստեղծված հանձնաժողովի կազմը

Հանձնաժողովի նախագահ՝

Անահիտ Սարգսյան

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի
ֆինանսական վարչության գլխավոր
տնտեսագետ

Անդամներ՝

Վարդան Հովհաննիսյան

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի
տարածքային կառավարման և տեղական
ինքնակառավարման հարցերի վարչության
պետի տեղակալ

Ավագ Գաբրիելյան

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի
կրթության, մշակույթի և սպորտի վարչության
գլխավոր մասնագետ

Հուսիկ Հարությունյան

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի
կրթության, մշակույթի և սպորտի վարչության
գլխավոր մասնագետ